ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿԻ ԹԵՄԱՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհրդի 22.02.2019թ. 4/11-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստման կարգի» 17-րդ կետի պահանջները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 13-րդ հոդվածով,

նկատի ունենալով փաստաբանների շրջանում անցկացված հարցումները վերապատրաստման համար նախընտրելի թեմաների վերաբերյալ,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

- ***հաստատել 2021 թվականի երկրորդ կիսամյակի (հուլիս-դեկտեմբեր ամիսների) փաստաբանների վերապատրաստման համար թեմաների ցանկը (համաձայն հավելվածի).***
- ***հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին սույն որոշմամբ հաստատված թեմաների շրջանակում կազմակերպել վերապատրաստման դասընթացները.***
- ***սահմանել, որ սույն որոշումը գործում է մինչև 2021թ. դեկտեմբերի 31-ը (ներառյալ):***

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

06.05.2021թ.
թիվ 84-Լ
ք.Երևան

Հավելված՝
ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի 06.05.2021թ.
թիվ 84-Լ որոշման

Արա Զոհրաբյան

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՄԱՐ ԹԵՄԱՆԵՐ
(2021 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսներ)

ՔԱՂԱՔԱՑԻԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆԵՐ

1. Հայցադիմում կազմելու հմտություններ և հակընդդեմ հայցի հարուցման կանոնները,
2. Դատաքննության փուլերը քաղաքացիական դատավարությունում,
3. Դատավարական հմտություններ.
4. Ապացուցման միջոցները և բեռի բաշխումը քաղաքացիական դատավարությունում,
5. Պարզեցված և արագացված վարույթների ինստիտուտը քաղաքացիական դատավարությունում,
6. Դատաքննության նախապատրաստական փուլը քաղաքացիական դատավարությունում,
7. Միջանկյալ դատական ակտերը ՀՀ քաղաքացիական դատավարությունում,
8. Իրավաբանական փաստի հաստատման վարույթ,
9. Փորձաքննությունը քաղաքացիական դատավարությունում,
10. Կորպորատիվ վեճերով փաստաբանի մասնակցություն,
11. Հայցային վաղեմության ինստիտուտ,
12. Ապահովագրության ինստիտուտ, վնասի հատուցում, իրավակիրառ պրակտիկա,
13. Վիճահարույց և առոչինչ գործարքներ,
14. Գործարքների անվավերության ինստիտուտը,
15. Երաշխավորության ինստիտուտ,
16. Էական մոլորության, խաբեության, բռնության, սպառնալիքի արդյունքում կնքված գործարքների վերաբերյալ դատական պրակտիկա,
17. Քաղաքացիական պայմանագրի փոփոխման և լուծման գիտագործնական հարցեր,
18. Պայմանագրի լուծումը և փոփոխումը դատական կարգով,
19. Նվիրատվության ինստիտուտ,
20. Փոխառության պայմանագիր և փոխառության պայմանագրի վերաբերյալ վեճերով դատական պրակտիկայի ամփոփում,
21. Շինարարական կապալի պայմանագիր,
22. Բարեխիղճ ձեռքբերման ինստիտուտ,

23. Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության ճանաչման առանձնահատկությունները,
24. Սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ վինդիկացիոն և նեգատոր հայցեր,
25. Ինքնակամ շինությունների օրինականացման ինստիտուտ,
26. Վնասի հատուցման ինստիտուտ,
27. Առողջությանը պատճառած վնասի հատուցման ինստիտուտը, դատական պրակտիկա,
28. Առավել վտանգի աղբյուրի գործադրմամբ պատճառված վնասի հատուցում,
29. Անհիմն հարստացման ինստիտուտ,
30. Պատվի և արժանապատվության իրավունքի պաշտպանության առանձնահատկություններ,
31. Ժառանգման ինստիտուտ,
32. Գործարարական իրավունք,
33. Իրավաբանական անձանց լուծարման և վերակազմավորման առանձնահատկությունները,
34. Իրավաբանական անձանց հիմնադրման առանձնահատկությունները,
35. Բաժնետիրական ընկերության կառավարման առանձնահատկություններ,
36. Կոտորակային բաժնետոմսեր և դրանց պարտադիր հետգնման ինստիտուտ,
37. Կոտորակային բաժնետոմսերի հետ կապված դատական պրակտիկան,
38. Սնանկության ինստիտուտ,
39. Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության առանձնահատկություններ,
40. Հեղինակային և հարակից իրավունքների պաշտպանության ինստիտուտը,
41. Ապրանքային նշանի պետական գրանցման առանձնահատկությունները,
42. Սպառողների իրավունքների պաշտպանություն,
43. Միջազգային պայմանագրային իրավունք,
44. Միջազգային փոխադրումներ,
45. Միջազգային վճարային գործարքներ,
46. Միջազգային առևտրային իրավունք,
47. Միջազգային բեռնափոխադրումներ,
48. Միջազգային մասնավոր իրավունքի հիմնահարցերը,
49. Աշխատանքային վեճերի առանձնահատկությունները, դատական պրակտիկայի ամփոփում,
50. Աշխատանքային իրավահարաբերությունների ծագման, փոփոխման և դադարեցման առանձնահատկությունները,
51. ՀՀ ընտանեկան օրենսդրության հիմնախնդիրները և ընտանեկան վեճերի առանձնահատկությունները,

52. Երեխաների բնակության վայրը որոշելու, շփման և դաստիարակությամբ զբաղվելու հարաբերությունների կարգավորումը ՀՀ ընտանեկան օրենսդրությամբ և դատական պրակտիկան,

53. Երեխայի լավագույն շահի պաշտպանության հիմնահարցերը,

54. Հողային իրավունք,

55. Արբիտրաժ,

56. Համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված սեփականության օտարման և տնօրինման հարաբերությունների իրավական կարգավորումը և դատական պրակտիկան,

57. Բանկային իրավունք,

58. Հաշտարարի ինստիտուտը,

59. Ձեռնարկատիրական գործունեություն,

60. Ֆինանսական շուկաներ և գործիքներ, արժեթղթեր,

61. Քաղաքաշինության բնագավառի իրավական կարգավորումը,

62. Ընտանեկան վեճերի տեսակները և առանձնահատկությունները,

63. Որդեգրման ինստիտուտի իրավական կարգավորումը,

64. Ընտանեկան վեճերով դատական պրակտիկայի ամփոփում,

ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝

65. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի փոփոխություններ և լրացումներ,

66. ՀՀ քրեական օրենսգրքի փոփոխություններ և լրացումներ,

67. Գաղտնի քննչական գործողությունները և օպերատիվ հետախուզական միջոցառումները քրեական դատավարությունում,

68. Օպերատիվ հետախուզական միջոցառումների անցկացման ընթացքում օգտագործվող հատուկ տեխնիկական միջոցների ցանկը և համապատասխան իրավական կարգավորումները,

69. Ապացույցները ՀՀ քրեական դատավարությունում,

70. Փաստաբանների ներգրավումը քրեական գործերում: Պրակտիկ հիմնախնդիրները և դրանց գործնական լուծումները,

71. Փաստաբանների իրավական պաշտպանությունը քրեական վարույթն իրականացնող մարմնի անօրինական գործողությունների դեմ,

72. Փաստաբանի պատասխանատվությունը վստահորդի ապօրինի գործողությունների համար,

73. Մինչդատական վարույթի առանձնահատկությունները,

74. Դատախազի դերը քրեական դատավարությունում,

75. Դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ,

76. Պաշտպան հրավիրելը, նշանակելը, փոխարինելը և վարույթին նրա մասնակցելու այլ հիմքերը,

77. Ժամկետների հաշվարկի առանձնահատկությունները քրեադատավարական իրավունքում,

78. Դատական քննության արագացված կարգի կիրառման հիմնահարցերը ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքի համատեքստում,

79. Պատիժ նշանակելը,

80. Պատժի տեսակները քրեական իրավունքում,

81. Քրեական պատասխանատվությունից ազատվելը գործուն զղջալու, տուժողի հետ հանցանք կատարած անձի հետ հաշտվելու և իրադրության փոփոխության հիմքով: Նյութական և դատավարական ասպեկտներ,

82. Տուգանքը հանրային աշխատանքով փոխարինելու, գույքի բռնագանձման, համաներման հիմքով պատժից ազատելու հիմնահարցերը դատական պրակտիկայում,

83. Դատական փորձաքննությունների հիմնախնդիրները (տեսություն և պրակտիկա),

84. Դատական փորձաքննությունները քրեական գործերով՝ միջազգային իրավական համագործակցության համատեքստում.

85. Դատաբժշկական փորձաքննություն,

86. Հանցագործությունների քննության կրիմինալիստիկական օրինաչափությունները,

87. Քրեական գործերով վերաքննիչ բողոք ներկայացնելու առանձնահատկությունները,

88. Քրեական գործերով վճռաբեկ բողոք ներկայացնելու առանձնահատկությունները, վարույթ ընդունելու ինստիտուտը,

89. Պաշտպանության ռազմավարություն և մարտավարություն,

90. Մարդկանց թրաֆիքինգի կամ շահագործման գործերի քննության առանձնահատկությունները,

91. Տուժողների, վկաների ցուցմունքների հրապարակման հիմնախնդիրները քրեական գործի ընթացքում էական հակասության հիմքով,

92. Խուլիգանության գործերով դատական պրակտիկայի վերլուծություն.

93. Ինքնասպանության հասցնելու գործերով դատական պրակտիկա,

94. Տևող և շարունակվող հանցագործությունների առանձնահատկությունները,

95. Տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների առանձնահատկությունները,

96. Պայմանական վաղաժամկետ պատժից ազատման հիմնախնդիրները,

97. Համաներումը, դրա կիրառման հիմնախնդիրները,

98. Անչափահասների մասնակցությամբ քրեական գործերի քննության առանձնահատկությունները,

99. Նոր երևան եկած և նոր հանգամանքով գործերի վերանայման առանձնահատկությունները քրեական դատավարությունում,

100. Քրեական ենթամշակույթ,

101. Հանցակցություն,

102. Սեփականության դեմ ուղղված հանցագործություններ,

103. Խարդախություն,

104. Ավազակություն,

105. Օրինական ձեռնարկատիրական և այլ տնտեսական գործունեությանը խոչընդոտելը,

106. Անձի դեմ ուղղված հանցագործություններ,
107. Բանկային ոլորտում կատարվող հանցագործություններ,
108. Զինվորական հանցագործություններ,
109. Առանձին հանցագործություններին առնչվող հիմնախնդիրներ,
110. Դատապարտված անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կազմակերպում,
111. Պրոբացիայի ինստիտուտ,
112. Անմեղության կանխավարկած,
113. Հանցագործությունը բացառող հանգամանքներ,
114. Աֆեկտի վիճակում կատարած սպանություն,
115. Մեղքի հասկացություն, մեղավորության ձևերը,
116. Ազատազրկման դատապարտվածներին իրավաբանական օգնություն տրամադրում,
117. Քաղաքացիական հայցը քրեական դատավարությունում,
118. Վարույթ իրականացնող մարմնի անօրինական գործողությունների դեմ պաշտպանության միջոցները քրեական դատավարությունում,
119. Դեպքի վայրի զննության առանձնահատկությունները, դեպքի վայրից առգրավված իրերի փաթեթավորման առանձնահատկությունները,

ՎԱՐՉԱԿԱՆ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝

120. Վարչարարություն, հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի առանձնահատկությունները և քննարկման կարգը,
121. Հայեցողության ինստիտուտը վարչական իրավահարաբերություններում,
122. Վարչական ակտերի տեսակները,
123. Վարչական ակտերի անվավերությունը,
124. Հայցի տեսակները վարչական դատավարությունում,
125. Ապացուցման միջոցները վարչական դատավարությունում,
126. Ապացուցման բեռի բաշխումը վարչական դատավարությունում,
127. Դատաքննության նախապատրաստական փուլը վարչական դատավարությունում,
128. Բողոքարկման փուլը վարչական դատավարությունում,
129. Տնտեսական մրցակցության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում,
130. Փաստաբանի մասնակցությունը մաքսային գործերով,
131. Հարկային իրավախախտումներ,
132. Հարկային վեճերի արտադատական և դատական քննության առանձնահատկությունները,
133. Գործարքների կնքման արդյունքում առաջացող հարկային պարտավորություններ,
134. Հարկերի տեսակները,
135. Անհատ ձեռնարկատիրոջ հարկային պարտավորությունները,
136. Իրավաբանական անձանց հարկային պարտավորությունները,

137. Ընկերություններում իրականացվող հարկային ստուգումների առանձնահատկությունները,

138. Օտարերկրյա անձանց հարկումը Հայաստանի Հանրապետությունում,

139. Պետական գնումների գործընթացի իրավական կարգավորումը. Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները հարկային իրավունքի և ստուգումների ոլորտներում,

140. Արգելանքի կիրառումը վարչական մարմինների կողմից,

141. Երրորդ անձանց իրավունքները գույքն արգելանքի վերցնելու ժամանակ.

142. Վարչական մարմինների անօրինական գործողությունների դեմ պայքարի պրակտիկ միջոցներ,

143. վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջև ծագած հարաբերությունները,

144. Պաշտոնատար անձի անգործության վերաբերյալ վարչական դատարան դիմելու առանձնահատկությունները,

145. Հարկային հաշվառում,

146. Վարչական մարմինների մասնակցությունը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով կարգավորվող հարաբերություններում,

147. Դատական ակտերի հարկադիր կատարման ընթացքում առաջացող իրավական խնդիրները և դրանց լուծման մեխանիզմները,

148. Վարչական դատավարության հատուկ վարույթներ,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ՝

149. Դատարան դիմելու իրավունքը, դատարանի մատչելիությունը, կողմերի հավասարությունը և մրցակցային դատավարության ինստիտուտները,

150. Համակարգային հակամարտությունները միջազգային-իրավական և սահմանադրաիրավական կարգավորման կառուցակարգում,

151. Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հետ կապված հմտություններ,

152. Օտարերկրացիների իրավունքները Հայաստանի Հանրապետությունում,

153. Փաստաբանի մասնակցությունը եվրոպական դատարանում,

154. Եվրոպական դատարան գանգատ գրելու առանձնահատկությունները,

155. Անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքն ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը,

156. Խոշտանգումների, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելքն ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 3-րդ հոդվածի և ՀՀ ներպետական օրենսդրության պահանջները,

157. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 5-րդ և 6-րդ հոդվածների կիրառման պրակտիկան,

158. Քաղաքացիական գործերով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի մեկնաբանման վերջին զարգացումները,

159. Միջազգային արբիտրաժ,

160. Փաստաբանի մասնակցությունը արբիտրաժային տրիբունալում, որպես կողմի ներկայացուցիչ,

161. Փաստաբանի մասնակցությունը արբիտրաժային տրիբունալում, որպես արբիտր,

162. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 14-րդ հոդվածի վերաբերյալ գանգատների ընդունելիության առանձնահատկությունները,

163. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությունը ՄԻԵԿ-ի և մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային այլ փաստաթղթերի համատեքստում,

164. Տարեցների իրավունքների պաշտպանությունը ՄԻԵԿ-ի և Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի ներքո,

165. Քաղաքացիության ձեռքբերման իրավական հիմքերը և առանձնահատկությունները: Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի փոխկապակցվածությունը քաղաքացիության վերաբերյալ ներպետական օրենսդրության հետ,

166. Քաղաքացիություն չունեցող անձանց իրավական կարգավիճակը,

167. Հավաքների ազատության իրավունքը և դրա սահմանափակումները,

168. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն կրոնի և սեռի հիմքով խտրականության բացառում,

169. Մարդու իրավունքները և խտրականության արգելքը միջազգային իրավական կարգավորումների և ներպետական իրավունքի զարգացման համատեքստում,

170. Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը.

171. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն կրոնի կամ համոզմունքի հիմքով խտրականության բացառում,

172. Ապացույցների գնահատման կանոնները ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի,

173. Կյանքի իրավունքի պաշտպանությունն ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի,

174. ՄԻԵԴ նախադեպային որոշումներ,

175. ՄԻԵԴ գանգատ ներկայացնելու հմտություններ,

176. Եվրասիական տնտեսական միության իրավունք,

177. Միջազգային դատական համագործակցության (դատական ակտերի ճանաչում, կատարում, դատական հանձնարարությունների կատարում) վերաբերյալ կնքված պայմանագրերի ներկայացում և վերլուծություն,

178. Միջազգային հարկային օրենսդրություն,

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ԱՅԼ ՈՒՂՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝

179. Փաստաբանի վարքագծի կանոնագիրք (դեոնթոլոգիա),

180. ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի կարգապահական նիստերով որոշումների ամփոփում,

181. Փաստաբանների միջազգային ասոցիացիայի (International Bar Association) կազմակերպաիրավական կարգավիճակը և գործունեությունը,

182. Փաստաբանական գործունեության առանձնահատկությունները արտասահմանյան երկրներում,

183. Դատական փորձաքննություններ, փորձագետի եզրակացությունը որպես ապացույց, լրացուցիչ և կրկնակի փորձաքննություն,

184. Բարոյական վնասի հատուցման ինստիտուտը ՍԴ որոշման համատեքստում,

185. Փաստաբանական գրասենյակի կառավարման առանձնահատկությունները,

186. Բիզնես կառավարում, գործարար էթիկա, արդյունավետ բանակցություններ, հաղորդակցություն և հռետորաբանություն,

187. Սթրեսի կառավարում, էմոցիոնալ կոմպետենտություն և կոնֆլիկտների կառավարում,

188. ՁԼՄ-ների հետ կապված արդյունավետ հաղորդակցում,

189. Փախստականների իրավունք,

190. Սոցիալական ապահովության իրավունք,

191. Դատական ակտերի հարկադիր կատարման վարույթն ըստ գործող օրենսդրության և իրավակիրառ պրակտիկայի,

192. Կենսաթոշակային իրավունք,

193. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ (քաղաքացիական ուղղվածություն),

194. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ (քրեական ուղղվածություն),

195. ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներ (վարչական ուղղվածություն),

196. ՀՀ ներպետական օրենսդրության բացթողումները՝ ՄԻԵԿ-ի և այլ կոնվենցիաների հիմնադրույթների համատեքստում,

197. Հայաստանի Հանրապետությունում կայացած դատական ակտերը Ռուսաստանի Դաշնությունում ճանաչելու և կատարելու ինստիտուտը,

198. Փաստաբանական հմտություններ,

199. Իրավաբանական հոգեբանությունը և դրա առանձնահատկությունները,

200. Միգրացիոն հոսքերի, միգրացիոն քաղաքականության և միգրացիոն օրենսդրության վերաբերյալ՝ այդ թվում աշխատանքային միգրացիա,

201. Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակի, քաղաքացիության ձեռքբերման և դադարեցման, երկքաղաքացիության իրավական վիճակի առանձնահատկություններ,

202. Փաստաբանության ինստիտուտի միջազգային փորձը (համեմատական վերլուծություն),

203. Նոտարական գործողությունների ինստիտուտը,

204. Քաղաքացիության ձեռքբերումը Հայաստանի Հանրապետությունում, այլ երկրներում (երկքաղաքացիություն),

205. Փաստաբանական գործունեությանն առնչվող իրավական ակտեր և նախագծեր,

206. Քննարկվող ու փոփոխվող օրենքների քննարկում,

207. Վեճերի լուծման այլընտրանքային տարբերակներ,

208. Դատավորների դեմ կարգապահական պատասխանատվության ենթարկելու համար դիմում գրելու պրակտիկ հմտություններ,

209. Վճռաբեկ բողոք գրելու պրակտիկ հմտություններ,

210. Դատական ակտերի հարկադիր կատարման ընթացքում ծագող հիմնախնդիրներ,

211. Առևտրային գաղտնիք, իրավական խնդիրներ և պաշտպանության մեխանիզմներ,

212. Անձնական տվյալների պաշտպանություն,

213. Ինֆորմացիոն տեխնոլոգիաներ՝ իրավական խնդիրներ և զարգացումներ,

214. Իրավական վերլուծությունների կատարման մեթոդ (irac),

215. Փաստաբանական գործունեության մեջ կիրառվող իրավաբանական բնույթի փաստաթղթերի տեսակները և դրանք կազմելու հմտությունները,

216. Գործավարություն, տեղեկատվության ձեռքբերում և մշակում,

217. Իրավական ակտերի գործողությունը ժամանակի, տարածության մեջ և անձանց շրջանակներում,

218. Ներդրումային ոլորտ.

219. Խղճի և դավանանքի ազատության պաշտպանություն

220. Փաստաբանի կողմից (անհատ ձեռնարկատեր կամ կազմակերպություն) հաշվապահական հաշվառում վարելու առանձնահատկություններ,

221. Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը փաստաբանական գործունեության մեջ,

222. Զինծառայողների և, նրանց ընտանքի անդամների իրավունքներ,

223. Նոր քաղաքացիական դատավարության օրենսգրքի առանձնահատկությունները,

224. Իրավաբանական անգլերեն: Գործածության ոլորտները և հնարավորությունները,

225. Էլեկտրոնային կառավարման գործիքները,

226. Անչափահասների իրավունքների պաշտպանության քրեաիրավական ասպեկտները,

227. Անհաղթահարելի ուժը քաղաքացիաիրավական հարաբերություններում: